հանդստարանը նոր է. այն բաժանված է երկու մասի՝ քրիստոնեական և մուսուլմանական: Քրիստոնեական մասում է գտնվում միակ հայի՝ կարմիր գրանիտից վերջերս կառուցված հոյակապ կոթողը՝ դիմաքանդակով, որի ստորև փորագրված է.

382.

ВРАЧ-ХИРУРГ/ МИХАЛЬЯНЦ/ АШОТ АТАНАСЕВИЧ./ СГОРАЯ САМ/, СВЕТИЛ ДРУГИМ.

ՍՈՒԴԱԿ (ՍՈՒՐՈԺ, ՍՈԼԴԵՅ, ՍՈՒԳԴԵՅ, ՍՈՒՂՏԱ)

Մինչև Կաֆայի ծաղկումը Սուդակ-Սուրոժը մեծ դեր է կատարել միջազգային առևտրի և փոխանակության ասպարեզում: Սուրոժ քաղաքի անունով ամբողջ Ղրիմը կոչել են Սուրոժյան թերակղզի[85]: Լ.Ս.Խաչիկյանը բազմաթիվ ակզբնաղբյուրների հիման վրա ապացուցել է, որ ռուսական տարեգրքերում հիշատակվող «Սուրոժցի հյուրերը» ազգությամբ եղել են հայեր[86]: Նրանք Կաֆայից և Սուրոժից Մոսկվա ժամանած վաճառականներ էին, որոնցից10-ը մասնակցել են Կուլիկովյան ճակատամարտին և արժանացել բարձր դնահատանքի[87]:

Սուդակը աշխարհին հայանի է նաև հակայածավալ ջենովական ամրոցով: Պարապատերից դուրս, ծովափնյա ժայռերի ստորոտին առկա է 12 առաքյալների անուն կրող թաղածածկ մի եկեղեցի (XIII-XIVդդ.), որի կառուցումը վերագրվում է ղրիմահայերին: Ջենովացիների օրոք, քաղաքից փոքր-ինչ հեռու՝ սարալանջին, սուրոժցի հայերը կառուցել են Ս. Գևորգ վանքը, որն այժմ գոյատևում է ավերակների տեսքով: Երրեմնի հայաշատ այս ընակավայրում[88] Մ.Բժշկյանի այցի ժամանակ հայեր չեն ապրել: Նրանք ընակվելիս են եղել մերձակա գյուղերից մեկում, ուր ունեցել են Ս.Աստվածածին եկեղեցին: Ս.Գևորգ վանքից Մ.Բժշկյանը վերծանել և ընդօրինակել է հետևյալ միակ արձանագրությունը.

383.

Ցիշատակ է սուրբ խաչս իղմիրցի Անդրէասի որդի Եղիային:

Հրատ. Բժշկյան. 318:

1985 թ. երկրորդ անգամ լինելով Սուդակի ամրոցում, արգելավայրի վարիչ Օ.Ի.Իվանովան մեզ ցույց տվեց տեղի թանգարանի ցուցասրահում դրված նորահայտ մի խաչքար՝ դեղնավուն կրաքարից, որի խաչանշանի տակ կար 3 տող.

384.

ԿԱՆԿՆԵՑԱՒ ՍԲ/ ԽԱՉՍ ՅԻՇԱՏԱԿ/ ԴԱՒԻԹԻ, ՆՈՐՇԱՅԻՆ:

---

85 Լ.Ս.Խաչիկյան, Հայերը հին Մոսկվայում…. էջ 63

86 Նույն տեղում էջ 72:

87 Նույն տեղում, էջ 66

88 А.Л. Якобсон,Средневековый Херсонес XII-XIV вв. / в Серии: Материалы и исследованил по археологии СССР/, N.17 М.-Л., 1950, гл. I Տե՛ս նաև՝ И.А.Баранов, Судакская капелла, датировка и атрибутация, табл. VIII, Тезисы докладов, 1982, с. 276.